ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

««Կրթության բնագավառի տեսչական վերահսկողության մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի (այսուհետև՝ Նախագծերի) մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է կրթության բնագավառում պատշաճ վերահսկողության իրականացման ապահովման անհրաժեշտությամբ:

2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

2018 թվականի մարտի 23-ին ընդունվել են «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» և «Տեսչական մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքները, որոնց համաձայն՝ տեսչական մարմինները հանդիսանում են կառավարությանը ենթակա պետական մարմիններ: «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում են տեսչական մարմինները, որոնց թվում է նաև Կրթության տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին), որի ստեղծումից հետո դադարել է գործել Կրթության պետական տեսչությունը, և դրա կողմից վերահսկվող ոլորտների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասությունը վերապահվել է տեսչական մարմնին:

Ներկայումս տեսչական մարմնի լիազորություններն ամրագրող միակ իրավական ակտերը տեսչական մարմնի կանոնադրությունը և «Տեսչական մարմինների մասին» օրենքն է, իսկ տեսչական մարմնի կողմից վերահսկողության իրականացման գործընթացը կարգավորող միակ օրենսդրական ակտը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքն է: Մինչդեռ, կրթության բնագավառում պետական վերահսկողությունն ունի այս բնագավառի յուրահատկություններով պայմանավորված առանձնահատկություններ, որոնք առանձին օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն ունեն: Այսպես, տեսչական մարմնի կանոնադրությամբ որպես վերջինիս առաջնային գործառույթներ նախատեսված են կրթության որակի նկատմամբ վերահսկողության իրականացումը և կրթության որակի բարձրացումը: Նշված գործառույթների իրականացումը հնարավոր չէ միայն ստուգումների անցկացման միջոցով, քանի որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով նախատեսված գործիքակազմը կամ չի համապատասխանում այս բնագավառում վերահսկողության տրամաբանությանը կամ չի նախատեսում դրա արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ միջոցներ:

Մասնավորապես, ուսումնական հաստատություններում կրթության որակի նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացումը հնարավոր չէ միայն ստուգաթերթերի հիման վրա: Բացի այդ կրթության

որակի նկատմամբ վերահսկողությունը պահանջում է այնպիսի գործողությունների իրականացում, ինչպիսիք են՝

- ✓ գրավոր առաջադրանքների կամ թեստերի միջոցով ուսումնական պարապմունքների լսումներ և սովորողների գիտելիքների գնահատում.
- ✓ ըստ անհրաժեշտության, դասավանդողին մանկավարժական-մեթոդական կարողությունները, մասնագիտական գիտելիքները, տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը զարգացնող մեթոդական աջակցություն տրամադրում.
- ✓ ուսումնական պարապմունքների լսումների, սովորողների գիտելիքների գնահատման և հարցումների արդյունքների միջին ցուցանիշի հիման վրա տվյալ առարկայի դասավանդման բնութագրի կազմում.
- ✓ ուսումնական հաստատությունում բարոյահոգեբանական մթնոլորտի վերլուծության կամ առանձին խնդիրների պարզաբանման նպատակով տեսչավորման ընթացքում սովորողների և ուսումնական հաստատության աշխատակիցների շրջանում հարցումների իրականացում և այլն:

Նման պայմաններում անհրաժեշտ է տեսչական մարմնի համար նախատեսել այնպիսի վարչական գործիք, որը, հաշվի առնելով այս բնագավառի առանձնահատկությունները, հնարավորություն կտա ապահովել կրթության որակի նկատմամբ իրական և արդյունավետ վերահսկողության իրականացումը:

Կրթության բնագավառում վերահսկողության նպատակների արդյունավետ իրականացումը պահանջում է նաև ստուգումների իրականացում պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

Գործող օրենսդրությամբ տեսչական մարմինը չունի կրթության բնագավառում վերահսկողություն իրականացնելիս խախտումներ հայտնաբերելու դեպքում իրական և գործուն ներգործության միջոցներ կիրառելու լիազորություններ: Այս տեսչական մարմինը միակն է նաև, որը չունի վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորություն:

Այսպիսով, վերոշարադրվածը պահանջում է կրթության բնագավառում տեսչական վերահսկողությունը համապարփակ կարգավորող օրենսդրական ակտի մշակում, որը կապահովի նշված խնդիրների համակողմանի կարգավորումը՝ կրթության բնագավառի առաձնահատկությունների հաշվառմամբ:

3. Կարգավորման նպատակը և բնույթը

Նախագծերով նախատեսվում են հետևյալ հիմնական իրավական կարգավորումները՝

- ➢ կրթության բնագավառում տեսչական վերահսկողության նպատակները և խնդիրները.
- ➢ կրթության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի լիազորությունները.
- ➢ որպես կրթության որակի նկատմամբ տեսչական մարմնի վերահսկողության ինքնուրույն ձև նախատեսվում է տեսչավորումը, որպես կրթական գործընթացի գնահատման նպատակով իրականացվող

համալիր գործառույթ, որն ուղղված է առանձին ուսումնական հաստատությունում կրթության որակի գնահատմանը կամ առկա խնդիրների բացահայտմանը:

- նախատեսվում է պետական, մարզպետարանի կամ համայնքապատարանի ենթակայությամբ գործող ուսումնական հաստատություններում ստուգումների իրականացման իրավական հնարավորություն՝ կարգավորելով ստուգումների իրականացման դեպքերը.
- նախատեսվում է կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները խախտելու դեպքում վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու իրավական հնարավորություն.
- նախատեսվում է բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար լիցենզավորման համապատասխան կարգերով սահմանված լիցենզիայի պարտադիր պահանջների և պայմանների նկատմամբ վերահսկողություն:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագծերը մշակվել են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի և Կրթության տեսչական մարմնի կողմից համատեղ:

5. Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունման արդյունքում համապարփակ կկարգավորվեն կրթության բնագավառում տեսչական մարմնի գործունեության հետ կապված իրավահարաբերությունները՝ ստեղծելով տեսչական մարմնի բնականոն վերահսկողության համար անհրաժեշտ և բավարար իրավական նախադրյալներ:

6.Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. 2050 Հայաստանի վերափոխման ռազմավարություն, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագիծը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագրի՝ փոխվարչապետ Վարչապետի աշխատակազմ բաժնի 10-րդ կետի պահանջներից: